ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 մայիսի 2016 թվականի **թիվ 11** քաղ. Երեւան

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի նախագիծը նախապատրաստելու ժամկետների վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16–րդ հոդվածին համապատասխան.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունների հետ համատեղ ապահովել «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի նախագծի նախապատրաստման ավարտը՝ ելնելով մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 28-ը այն ստորագրելու անհրաժեշտությունից.

զեկուցել «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի նախագծի նախապատրաստման ընթացքի վերաբերյալ Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի ժամանակ:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**